# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

## ՊԱՐԶԵՑՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատուն՝ ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն, որը գտնվում է ք.Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում, ստորև ներկայացնում է ՊԵԿ-ՊԸ-ԾՁԲ-17/1 ծածկագրով պարզեցված ընթացակարգի արդյունքում 2017թ-ի ապրիլի 7-ին կնքված ՊԵԿ-ՊԸ-ԾՁԲ-17/1 ծածկագրով գնման պայմանագրում 2017թ-ի մայիսի 31-ին կատարված փոփոխությունների վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ: Անհրաժեշտություն է առաջացել Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցման ծավալները ավելացնել:

Փոփոխության նկարագրություն-1: Փոփոխվել է Պայմանագրի գինը և ավելացվել է Պայմանագրի գումարը 140 000 (մեկ հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամով, այն սահմանվելով 840 000 (ութ հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ՝ ավելացվելով Պայմանագրի տեխնիկական բնութագրով նախատեսված ծառայությունների ծավալը՝ (Բագրատաշենքի մաքսային կետի հողատարածքի մակերեսը՝ 1.00111 հա. և Գոգավան-Պրիվոլնոյեի մաքսային կետի հողատարածքի մակերեսը՝ 0.87734 հա.):

Փոփոխության նկարագրություն-2: Փոփոխվել է Պայմանագրի N-1 Հավելվածը՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը և Պայմանագրի N-2 Հավելվածը՝ վճարման ժամանակացույցը և հաստատվել է նոր խմբագրությամբ:

Փոփոխության հիմնավորում: Հիմքը՝ ՀՀ կառավարության 10.02.2011թ. թիվ 168-Ն որոշման 60-րդ կետի 2-րդ ենթակետ:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Գ.Ղազարյանին:

Հեռախոս՝ 060 544-704:

Էլ. փոստ՝ gugks@mail.ru:

Պատվիրատու՝ **ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե**

## Համաձայնագիր-3
## 07.04.17թ. կնքված N ՊԵԿ-ՊԸ-ԾՁԲ-17/1 ծածկագրով գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

ք. Երևան «31» դեկտեմբերի 2017թ.

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի ղեկավար Ա.Սահակյանի մի կողմից, և «Է.Ապրեսյան» ՍՊԸ-ն, այսուհետ՝ «Կատարող», ի դեմս ընկերության տնօրեն Է.Ապրեսյանի մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև՝ կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված կարգի 60-րդ կետի 2-րդ ենթակետի պահանջներով և հիմք ընդունելով 07.04.17թ. կնքված N ՊԵԿ-ՊԸ-ԾՁԲ-17/1 ծածկագրով գնման պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 7.3-րդ կետը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

### 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

**Կողմերը որոշեցին՝**

1.1 Փոփոխել Պայմանագրի գինը և ավելացնել Պայմանագրի գումարը 140 000 (մեկ հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամով, այն սահմանելով 840 000 (ութ հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ՝ ավելացնելով Պայմանագրի տեխնիկական բնութագրով նախատեսված ծառայությունների ծավալը՝ (Բագրատաշենքի մաքսային կետի հողտարածքի մակերեսը՝ 1.00111 հա. և Գոգավան-Պրիվոլնոյեի մաքսային կետի հողատարածքի մակերեսը՝ 0.87734 հա.):

1.2 Փոփոխել Պայմանագրի N-1 Հավելվածը՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցը և Պայմանագրի N-2 Հավելվածը՝ վճարման ժամանակացույցը և հաստատել նոր խմբագրությամբ /կցվում է/:

### 2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3. Սույն պայմանագրում կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4. Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված է հայերեն լեզվով, /երկու/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

### 3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

| Պատվիրատու | Կատարող |
|---|---|
| ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե | «Է.Ապրեսյան» ՍՊԸ |
| ք. Երևան, Մ.Խորենացու-3,7 | ք.Վանաձոր, Թամանցիների 14 |
| ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն | «Ինեկոբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900013202016, 900013574018 | Հ/Հ 2050222004191001 |
| ՀՎՀՀ 02647057 | ՀՎՀՀ 06919097 |
| ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի ղեկավար՝ | «Է.Ապրեսյան» ՍՊԸ-ի տնօրեն՝ |
| Ա.Սահակյան | Է.Ապրեսյան |
| (ստորագրություն) Կ.Տ | (ստորագրություն) Կ.Տ |

Հավելված
Հաստատված է
«07» ապրիլի 2017թ. կնքված
N ՊԵԿ-ՊԸ-ԾՁԲ-17/1
գնման պայմանագրի փոփոխությամբ

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

**ՀՀ ԿԱ ՊԵԿ Բագրատաշենի և Գոգավան-Պրիվոլնոյեի մաքսային կետերի հողատարածքների և շենքերի չափագրման ծառայություններ**

| Չ/Հ | Անվանումը | Տեխնիկական բնութագիրը |
|---|---|---|
| | ՀՀ ԿԱ ՊԵԿ Բագրատաշենի և Գոգավան-Պրիվոլնոյեի մաքսային կետերի հողատարածքների և շենքերի չափագրություն | **Բագրատաշենքի մաքսային կետ**<br>Շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսը՝ 7200 քմ, հողտարածքի մակերեսը՝ 10.01811 հա.<br>**Գոգավան-Պրիվոլնոյեի մաքսային կետ**<br>Շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսը՝ 3300 քմ, հողատարածքի մակերեսը՝ 3.67334 հա.<br>Չափագրումն իրականացնել համաձայն ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 20.10.2011թ. թիվ 284-Ն հրամանով հաստատված ձևերին համապատասխան:<br>Կատարված աշխատանքները պատվիրատուին տրամադրվում են թղթային տարբերակով և էլեկտրոնային կրիչներով /2-ական օրինակ/:<br>Մասնակիցը պետք է ունենա քարտեզագրության, գեոդեզիայի, չափագրման (հաշվառման) և հողաշինարարության գործունեություն իրականացնելու իրավունք: |
| | Այլ պայմաններ | Ծառայությունների մատուցման ժամկետը՝ մինչև 2017 թվականի հունիսի 16-ը ներառյալ: |

**Պատվիրատու**
ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մ.Խորենացու-3,7
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900013202016, 900013574018
ՀՎՀՀ 02647057
ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի ղեկավար՝

Ա.Սահակյան
-----------------------------
(ստորագրություն)
Կ.Տ

**Կատարող**
«Է.Ապրեսյան» ՍՊԸ
ք.Վանաձոր, Թամանցիների 14
«Ինեկոբանկ» ՓԲԸ

Հ/Հ 2050222004191001
ՀՎՀՀ 06919097
«Է.Ապրեսյան» ՍՊԸ-ի տնօրեն՝

Է.Ապրեսյան
-----------------------------
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված
Հաստատված է
«07» ապրիլի 2017թ. կնքված
N ՊԵԿ-ՊԸ-ԾՁԲ-17/1
գնման պայմանագրի փոփոխությամբ

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության անվանումը | Բյուջետային ծախսերի տնտ. դասակ. հոդվածը* | Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի 2017թ. արտաբյուջետային միջոցներով նախատեսված հատկացումների հաշվին, ըստ ամիսների՝ ընդ որում | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | Մինչև 2017 թվականի դեկտեմբերի 25-ը | Ընդամենը Տարի |
| ՀՀ ԿԱ ՊԵԿ Բագրատաշենի և Գոգավան-Պրիվոլնոյեի մաքսային կետերի հողատարածքների և շենքերի չափագրություն | 4241 | | | 700 000 | 700 000 | 840 000 | 840 000 | 840 000 | 840 000 | 840 000 | 840 000 | 840 000 | **840 000** |

* Վճարվող գումարները ներկայացված են աճողական կարգով:

**Պատվիրատու**
ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մ.Խորենացու-3,7
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900013202016, 900013574018
ՀՎՀՀ 02647057
ՀՀ ԿԱ ՊԵԿ աշխատակազմի ղեկավար՝

**Ա.Սահակյան**
---------------------------
(ստորագրություն)
Կ.Տ

**Կատարող**
«Է.Ապրեսյան» ՍՊԸ
ք.Վանաձոր, Թամանցիների 14
«Ինեկոբանկ» ՓԲԸ

Հ/Հ 2050222004191001
ՀՎՀՀ 06919097
«Է.Ապրեսյան» ՍՊԸ-ի տնօրեն՝

**Է.Ապրեսյան**
---------------------------
(ստորագրություն)
Կ.Տ